

**ՄԻՋԻՆ ԴՊՐՈՑԻ ԱՆԳԼԵՐԵՆԻ ԴԱՍԱԳՐՔԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՏՈՆԵՐԻ ԵՎ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐԻ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ
Նալբանդյան Ն. Ա.**

Սույն հոդվածում դիտարկվել է միջին դպրոցի անգլերենի դասագրքերի լեզվանյութը՝ կարևորելով տոներին և ավանդույթներին վերաբերող տեքստերն ու առաջադրանքները: Քննության են առնվել հանրակրթական դպրոցներում շրջանառվող դասագրքերը՝ ներկայացված երկու տարբեր հեղինակների կողմից (Գասպարյան, Գրիգորյան): Այնուհետև ներկայացվել են մեթոդական մի շարք առաջադրանքներ, որոնք միտված են ձևավորելու սովորողների միջմշակութային հաղորդակցական կարողությունները՝ տոների և ավանդույթների տեսանկյունից:

Բանալի բառեր. միջմշակութային հաղորդակցական կարողություններ, ազգային տոներ և ավանդույթներ, մշակութային արժեքներ, սոցիալական ժառանգություն, պարբերականության սկզբունք, լեզվանյութ, առարկայական չափորոշիչ:

Հոդվածի հիմքում ընկած է միջմշակութային հաղորդակցական կարողություններ ձևավորելու հիմնախնդիրը, որի կարևորագույն պայման է ուսումնասիրել ուսուցանվող լեզվի երկրի մշակույթը՝ իր ազգային տոներով ու ավանդույթներով հանդերձ: Յուրաքանչյուր աշակերտ պետք է գիտակցի, որ ամեն մի ազգ և պետություն արժևորվում է իր ինքնատիպ ավանդույթներով և սովորույթներով, որոնք կերպավորում են տվյալ ազգը, տալիս նրա անփոխարինելի նկարագիրը:

Հոդվածի **նպատակն** է արժևորել մշակութային բովանդակության դասանյութերի ընդգրկվածությունը միջին դպրոցի անգլերենի դասագրքերում, որը կնպաստի նաև միջմշակութային հաղորդակցության զարգացմանը:

Ուսումնասիրելով միջին դարոցի անգլերենի դասագրքերը՝ եկանք այն համոզման, որ միջմշակութային կոմպետենցիայի զարգացման տեսանկյունից առկա են որոշակի բացթողումներ՝ կապված թե՛ տեքստերի և թե՛ տեքստերին հաջորդող վարժությունների համակարգի հետ: Երբեմն նպատակասլաց չի կիրառվում միջմշակութային հաղորդակցական կոմպետենցիան: Ըստ ժամանակակից պահանջների՝ միջմշակութային հաղորդակցական կարողություններ և հմտություններ ձևավորելու համար հարկ է դասագրքերում զուգահեռաբար անդրադառնալ երկու տարբեր մշակույթների՝ տոներին և ավանդույթներին, ներկայացնել նմանություններն ու տարբերությունները: Այս ամենով է պայմանավորված սույն հոդվածի **արդիականությունը**:

«Ավանդույթ» բառը ծագել է լատիներենից (*traditio*) և նշանակում է «փոխանցում»: Ավանդույթը սոցիալական և մշակութային ժառանգության բաղադրատարր է, որը, փոխանցվելով սերնդեսերունդ, երկար ժամանակ պահպանվում է հասարակության մեջ և սոցիալական խմբերում:

Ավանդույթների դերն անփոխարինելի է մշակույթում: Դարաշրջանների ստեղծագործական ներուժը բնորոշվում է ավանդույթների և նորարարությունների անքակտելի միասնությամբ [11, 26]:

Մ. Ա. Ռոզովի դիտարկմամբ՝ ավանդույթը սոցիալական փորձի պահպանման և փոխանցման հատուկ միջոց է, որն անցնում է մարդուց մարդ կամ սերնդից սերունդ, այսինքն՝ այն սոցիալական ժառանգության առանձնահատուկ մեխանիզմ է, որն իր գոյատևման ընթացքով հիշեցնում է լճակի մակերևույթի երկայնքով շարժվող ալիքի [13, 3]:

Ավանդույթը նման է ալիքի, որը, անցնելով որևէ հարթությունով, անկախ է նրանից:

Ինչ վերաբերում է տոներին, ապա տոներն առաջացել են մարդկության զարգացման հետ համընթաց: Տոնը մշակույթի առաջնային և կարևոր ձևերից է [8, 311]:

Ա. Ի. Մազանը բնորոշում է տոնը որպես ազատ ապրելակերպ, երբ ազատ ժամանակի և տարածության մեջ իրականանում է կամավոր հավաքված մարդկանց կենդանի հաղորդակցությունը [12, 206]:

Տոնը ազգային հանգստի ավանդական ձև է, որ բավարարում է մարդկանց պահանջմունքները զանգվածային հաղորդակցման ընթացքում, և որի մեջ միախառնված են մշակույթի բոլոր ձևերը [10, 131]:

Տոնի իմաստի տակ կարելի է հասկանալ նաև ազատ ժամանակ, հանգիստ, տոնախմբություն և ծիսակատարություն [9, 96]:

Այսպիսով, տոները առօրյայից տարբերվող, որոշակի կանոններով սահմանված հասարակական իրողություններ են, որոնք կրում են հանդիսավոր բնույթ ոչ աշխատանքային օրերին:

Այս համատեքստում առանցքային է օտար լեզվի ուսուցման գործընթացում տոների ու ավանդույթների վերաբերյալ դասանյութերի ընտրությունը դասագրքերում: Ուստի ըստ հանրակրթական դպրոցի առարկայական չափորոշի՝ միջին դպրոցում վերը նշված թեմաները նախատեսված են հետևյալ դասարաններում ուսուցանելու համար.

- 5-րդ դասարան. տոներ (մայրիկների տոն),
- 6-րդ դասարան. Հայաստան. տոներ (Նոր տարի և Սուրբ ծնունդ),
- 8-րդ դասարան. երկիրը, որի լեզուն սովորում եմ (սովորույթներ, ավանդույթներ, ազգային տոներ) [7, 23-24]:

Ինչպես պարզ դարձավ, միջին դպրոցի 7-րդ և 9-րդ դասարանների դասագրքերում նախատեսված չէ տոների և ավանդույթների ուսուցումը: Սակայն տվյալ թեմաները կարելի է բավականին խորն ուսումնասիրել արդեն նշված դասարաններում:

Հետևաբար ուսումնասիրեցինք միջին դպրոցում գործող 5-րդ, 6-րդ և 8-րդ դասարանների դասագրքերը և կատարեցինք համապատասխան եզրահանգումներ:

Գ. Գասպարյանի 5-րդ դասարանի դասագրքում ներառված են բավականին ծավալուն տեքստեր՝ տարբեր թեմաներով: Էջ 84-ում տրված է "Christmas Tree", իսկ էջ 87-ում "Christmas Shopping" թեմաները: Կարելի էր նախապես տոնի վերաբերյալ դասանյութ մշակել, որից հետո անդրադառնալ տոնածառի կամ Ծննդյան գնումների մասին պատմող ուսումնական նյութերին [1]:

Լ. Գրիգորյանի դասագրքում ընդգրկված է Սուրբ Ծննդի վերաբերյալ վարժությունների համակարգ. Match the pictures with the Christmas words. Can you unjumble the words? Find as many Christmas words as you can and win. Fill the gaps with the words from the box. Նաև աշակերտներին ներկայացվում են նամակագրության գեղեցիկ օրինակներ:

Դասագրքում անդրադարձ կա նաև մայրերի տոնին, որ նշվում է Բրիտանիայում "Mother's day in Britain"[3, 149]:

Սակայն, այս տոներին զուգահեռ, կարելի էր ներառել թեմաներ հայկական նմանատիպ տոների վերաբերյալ և պարզ հարցերի միջոցով կատարել քննարկում, որը կնպաստեր աշակերտների միջմշակութային կոմպետենցիայի զարգացմանը:

Գ. Գասպարյանի 6-րդ դասարանի դասագիրքը չի պարունակում տոներին և ավանդույթներին վերաբերող որևէ տեղեկատվություն:

Մինչդեռ Լ. Գրիգորյանի նույն դասագրքում, ինչպես նախորդ դասագրքում, 2-3 դասաժամ հատկացված է Նոր տարվան և Սուրբ Ծննդին՝ այս անգամ ընդլայնված տարբերակով [4, 3]:

Միգուցե այս պարագայում կիրառվել է պարբերականության սկզբունքը, սակայն 2-3 դասաժամի շրջանակներում կարելի էր ներառել լեզվանյութ հայկական նմանատիպ տոների վերաբերյալ, որը կհամապատասխաներ չափորոշյով նախատեսված դրույթներին:

Ինչ վերաբերում է Գ. Գասպարյանի 8-րդ դասարանի դասագրքին, ապա միայն մեկ թեմայով՝ “Holidays and Customs” տրվում է հակիրճ տեղեկատվություն Բրիտանիայում նշվող մի շարք տոների վերաբերյալ [2, 80-82]:

Ընդ որում՝ մեկ դասաժամի ընթացքում միանգամից մի քանի տոնին անդրադարձնալն արդյունավետ չէ, և աշակերտների մոտ չի ստեղծի ցանկալի պատկերացում հատկապես այնպիսի տոների մասին, որոնք չեն տոնվում մեր երկրում կամ ունեն տարբեր ավանդույթներ (օր.՝ Halloween):

Ուստի ճանաչողական-հաղորդակցական մոտեցման տեսանկյունից ցանկացած դասանյութ պետք է մատուցել յուրովի և ինքնատիպ՝ հաշվի առնելով աշակերտների անհատական հետաքրքրությունները: Տվյալ դեպքում խոսքը վերաբերում է անգլախոս երկրներում և Հայաստանում նշվող տոներին, որոնք շատ բազմազան են, և այս տոներն ուսուցանելիս առավել ուշադրություն պետք է դարձվի տվյալ տոնը բնորոշող խորհրդանիշների, ինչպես նաև տոնի նախապատմության և առկա սովորույթների վրա:

Լ. Գրիգորյանի 8-րդ դասարանի դասագրքի 7-րդ բաժինն ամբողջությամբ վերաբերում է անգլիական և ամերիկյան տոներին և ավանդույթներին [6, 118]:

Այս բաժնում աշակերտները ուսումնասիրում են այնպիսի տոներ, ինչպիսիք են՝ Սուրբ Վալենտինի օր, Անկախության օր, Շնորհակալության օր, Հելովին, Ապրիլյան կատակի օր: Էջ 124-ում տրված է նաև Կանադայի Կուրեք քաղաքում նշվող ձմեռային կառնավալի վերաբերյալ տեղեկություններ: Տոներին հաջորդում են մի շարք ավանդույթներ ներկայացնող նյութեր, որոնք շատ հետաքրքիր են: Դասագիրքը տոների և ավանդույթների տեսանկյունից բավական հագեցած է: Ցանկալի էր այս նյութերին զուգահեռ 1-2 հայկական տոն

կամ ավանդույթ ներկայացվեր, որը կնպաստեր միջմշակութային կոմպետենցիայի զարգացմանը:

Ճանաչողական-հաղորդակցական մոտեցման տեսանկյունից, անշուշտ, հարկ է դասագրքերում անդրադառնալ երկու երկրների տոներին և ավանդույթներին, ներմուծել բազմաբովանդակ տեղեկատվություն և վարժությունների համակարգ, կատարել համեմատություններ և վերլուծություններ:

Ուստի, ասվածի համատեքստում ներկայացնում ենք մեր կողմից մշակված և Գյումրու թիվ 5, 6, 7, 9 և 31 հիմնական դպրոցների 9-րդ դասարանցիներին տրված թեստի արդյունքները: Թեստը ներառում էր 15 հարց անգլախոս երկրների և Հայաստանի տոների և ավանդույթների վերաբերյալ, որի նպատակն էր ստուգել միջին դպրոցի աշակերտների պատրաստականությունը:

Արդյունքների ամփոփիչ վերլուծությունը ցույց է տվել, որ աշակերտների մեծ մասը սխալ է պատասխանել նշված հարցերին՝ չտիրապետելով Բրիտանիայի, ինչպես նաև Հայաստանի տոներին և ավանդույթներին: Այնուամենայնիվ մեր կարծիքով խնդիրը ոչ թե մեր աշակերտների՝ տվյալ նյութերին ծանոթ չլինելն է, այլ խնդրո առարկա թեմաները ներկայացնելու համար անգլերենից բավարար իմացություն, գիտելիք չունենալը: Օրինակ՝ աշակերտները խոստովանեցին, որ նրանք ընդհանրապես չեն հասկացել այնպիսի հարցերի իմաստները, որտեղ հարցը վերաբերում էր քրիստոնեությանը, մեկ ուրիշը՝ Հայաստանի խորհրդանիշներին, իսկ երրորդը՝ Սուրբ Մարգարին: Այս հարցերում նրանք հանդիպել են այնպիսի անծանոթ բառերի, որոնք թույլ չեն տվել հասկանալ հարցերի իմաստները՝ national patron, newly married, adopt, state religion, National Emblem:

Հետևաբար, հաշվի առնելով վերը նշված թեմաների կարևորությունը դասագրքերում՝ մշակեցինք մեթոդական համակարգ՝ հիմք ընդունելով առարկայական չափորոշիչը: Մշակված ուսումնական նյութերը, որ նախատեսված են 5-րդ, 6-րդ և 8-րդ դասարանների համար և հիմնականում միտված են զարգացնելու աշակերտների ճանաչողական-հաղորդակցական կարողությունները, կարելի է ներառել վերը նշված դասագրքերի չափորոշչով հատկացված ենթաբաժնում: Դասանյութերը մշակելիս չի անտեսվել նաև հեռահաղորդակցման միջոցների կիրառումը դասապրոցեսին: Ստորև ներկայացնում ենք մշակված դասանյութից առաջադրանքներ:

6-րդ դասարան

THEME: NEW YEAR AND CHRISTMAS

Task 1. Warm-up activities.

Task 2. Read two texts , summarize and retell:

NEW YEAR AND CHRISTMAS IN ARMENIA

NEW YEAR AND CHRISTMAS IN GREAT BRITAIN

Task 3. Use the T-chart method and try to guess which culture the given words belong to.

Task 4. Read the given sentences and decide whether they are Armenian or British traditions or they belong to two cultures.

Task 5. Match the two parts of the sentences.

Task 6. Guess the riddles.

Task 7. Study the lyrics and sing the song in chorus. Jingle Bells

Task 8. Read some facts about New Year. Did you know that...?

Task 9. Watch a small part from the film “The Search for Santa Paws” and answer the teacher’s questions.

Հետևաբար դասագրքաստեղծ հեղինակները պետք է մշակեն միջմշակութային հաղորդակցության ձևավորման հայեցակերպ՝ հստակորեն ներկայացնելով օտար լեզվի և մշակույթի բաղադրիչները (տոներն ու ավանդույթները) համապատասխան դասագրքի բոլոր բաժիններում և զարգացնելով միջմշակութային հաղորդակցություն իրականացնելու կարողությունները սարքեր մշակույթների երկխոսության համատեքստում:

ПРОБЛЕМА АНАЛИЗА УЧЕБНИКОВ АНГЛИЙСКОГО ЯЗЫКА СРЕДНЕЙ ШКОЛЫ С ТОЧКИ ЗРЕНИЯ ПРАЗДНИКОВ И ТРАДИЦИЙ

Налбандян Н. А.

В этой статье рассматривается языковой материал учебников английского языка средней школы, подчеркивается важность текстов и заданий, касающихся праздников и традиций. Были рассмотрены циркулирующие в общеобразовательных школах учебники, представленные двумя разными авторами (Гаспарян, Григорян). Затем был представлен ряд методических заданий, направленных на формирование межкультурных коммуникационных возможностей учащихся с точки зрения праздников и традиций.

Ключевые слова: межкультурные коммуникационные возможности, национальные праздники и традиции, культурные ценности, социальное наследие, принцип периодичности, языковой материал, предметный стандарт.

THE PROBLEM OF ANALYSIS OF MIDDLE SCHOOL ENGLISH TEXTBOOKS FROM THE VISION OF HOLIDAYS AND TRADITIONS

Nalbandyan N. A.

This article discusses the language material of middle school English textbooks, highlighting the importance of texts and assignments related to holidays and traditions. The textbooks circulating in public schools, presented by two different authors (Gasparyan, Grigoryan) were examined. Then, a number of methodological tasks were presented, which are aimed at developing students' intercultural communication skills in terms of holidays and traditions.

Keywords: intercultural communication skills, national holidays and traditions, cultural values, social heritage, principle of periodicity, language material, subject criteria.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Գասպարյան Գ. Գ., Անգլերեն լեզու: Հանրակրթական դպրոցի 5-րդ դասարանի դասագիրք, Եր.: «ՄԱՆՄԱՐ», 2014: 160 էջ:
2. Գասպարյան Գ., Հովհաննիսյան Ն., Քաջբերունի Հ. English 8. Երևան: «Մանմար»: 2015: 160 էջ:
3. Գրիգորյան Լ. Գ., Անգլերենի դասագիրք հանրակրթական դպրոցի 5-րդ դասարանի համար: Երևան: «Զանգակ»: 2014: 176 էջ:
4. Գրիգորյան Լ. Գ. Անգլերենի դասագիրք հանրակրթական դպրոցի 6-րդ դասարանի համար: Երևան: «Զանգակ»: 2015: 150 էջ:
5. Գրիգորյան Լ. Գ. Անգլերենի դասագիրք հանրակրթական դպրոցի 7-րդ դասարանի համար: Երևան: «Զանգակ»: 2014: 176 էջ:
6. Գրիգորյան Լ. Գ., Անգլերենի դասագիրք հանրակրթական դպրոցի 8-րդ դասարանի համար: Երևան: «Զանգակ»: 2015: 176 էջ:
7. Հանրակրթական դպրոցի առարկայական չափորոշիչ և ծրագիր: Երևան: 2007: 287 էջ:

8. Бердяев Н. Философия неравенства. Париж. УМСА – Пресс. 1990. 247 с.
9. Жигульский К. Праздник и культура. Пер. с польск. М.: Прогресс. 1985. 336 с.
10. Лаптева О. А. Изучение русской городской разговорной речи в местных центрах. // Вопросы языкознания. 1995. N 5. С. 127-140.
11. Лихачев Д. С. Избранные работы: в 3 т. Л. : Худож. Лит. 1987. 520 с.
12. Мазаев А. И. Праздник как социально-художественное явление. М.: Наука. 1978. 392 с.
13. Розов М. А. Теория социальных эстафет и проблемы эпистемологии. Москва.: Новый хронограф. 2008. 352 с.

Տեղեկություններ հեղինակի մասին

Նալբանդյան Ն. Ա. – մանկավարժական գիտությունների թեկնածու

Շիրակի պետական համալսարան

Էլ. փոստ՝ nalbnelly@mail.ru

Տրվել է խմբագրություն՝ 10.09.2021

Գրախոսվել է՝ 28.02.2022